



## 74. ԷՇԼ ԳՈՒԲԵՌՆԱՏՈՒՐ

Մե ախկատ մարթու կնիկ են հըլնում: Զատ չունին, մե էշ ունին, էն էլ աշկը քոռ: Էս մարթը աշունքը որ գալում ա, կարտոյ ա ծախում, չալամ ա ծախում, մե քանի մանեթ փող ա դգում, էշը հառեն ա քցում, էթում ա Հերևան, որ չիր, բրինձ բերա: Չիրն ավիլուկի վրեն քցեն, բրինձն էլ պախեն Զատկվան: Ճամբով էթում էր, մեկ էլ հինքը կայնում ա, էշը էթում ա: Տեսավ էշը գնաց, մե վերստ եռացավ:

Էս մարթը մտածեց. «Որ էշը մինակ կանա էթա, էլ ես էթում եմ ի՞նչ անեմ: Փողն էլ դնեմ խուրջինը, էշին ասեմ ինչ որ առնելու յա, թու էթա առնի բերա, ես էլ, տանը մանղր-մունղր գործ կա, կանեմ: Տանիսը կրխողեմ, Հերթիսաներին չիմ ու բնակ կրկդրեմ, կշտանոցները կրծեփեմ, ձմեռվան ձունը թամզցնելու մե բարֆիկ կշինեմ, շանքի էշը կըգա»:

Վաղնում խասնում ա էշին, «չոշ-չոշ» ա ասում, կայնցնում ա, էշին խարցնում ա.—Կանա՞ս էթա Հերևան:

Էշը զլոխն ա շարժում:

Տերն ասում ա.—Որ կանաս էթա, գնա՛, էս էլ փողը, դնում եմ խուրջինը: Կէթաս Հերևան, էրկու լիդր չիր կառնես, Զատկվա խըմար վեց գրվանքա բրինձ կառնես, պառվին մե հէժան գեյրացու կառնես, ընձի էլ էրկու գրվանքա՝ թութուն ու շուտ կըգաս, շատ բանդ չըլնես:

Էշը էթում ա, հինքը ետ ա գալում տուն: Գալում ա, պառվին պատմում ա հիր արածը: Պառավը բոռքում ա, մարթի խետ կովում ա, հեչ մարթի հեչ կոծը չի, ծծում ա կնզա անխելքության վրա:

—Ա՛յ մարթ, ա՛յ անխելք,—ասում ա կնիկը, —շուտ գնա խասի՛ էշին, էշը կէթա, կըկորի, հիմի խուրջինը տարան, դու էտ ի՞նչ անխելք ես: Բա՛ էշը կէթա քաղաք, առըտուր կանա՞, խելքտ թոցը եր ես:

Կնիկը շատ ասավ, մարթը չիչ լսած, հելավ արխային քնավ: Պառավը մնաց ախրվախ անելով:

Հընցավ իրեք օր: Էշի գալու օրը մոտցավ, հէսօր-հէքուց ա, Էշը կըգա: Էշը չըկա:

Կնիկն ասում ա, որ էլ չի գա, ո՞վ ա տեսե, որ Էշը հինքն հիրան էթա քաղաք, առըտուր անա, ետ գա, մարթն ասում ա, որ Էրևում ա՝ բրինձը թանգ ա, Էշը սպասում ա, չընքի հեժան բրինձ հըլնի:

Տասս օր հընցավ: Վերջը մարթը հելավ գնաց Հերևան, գնաց Էիր ծանոթի տունը, եղելութունը պատմեց:

Ծանոթը տեսավ, որ էս մարթը խելքը թոցրեր ա, ասավ.—Էշտ էկավ, իրեք օր քաղաքը ման էկավ, չիր ու բրինձին չըխավնավ, ասավ բդի էթամ Օրդուբաթու չիր ու բրինձ բերեմ: Էշը գնաց Օրդուբաթ:

Էս մարթը սրտպնդում ա, լավ ա Էշը չի կորե, հուր որ ա կըգա, ետ ա դառնում գալում ա տուն, կնզան պատմում ա: Կնիկ ձեռով չանչում ա ու չի խոսում:

Էս մարթը էլի սպասեց տասս օր, տեսավ՝ Էշը չըկա, հելավ գնաց Օրդուբաթ, մե թուրք ծանոթ ուներ, գնաց ծանոթի տունը, եղելութունը պատմեց, ծանոթը մտածեց ու ասավ.—Նատ դուզ ա, Էշը էկավ, չիրն ու բրինձը առավ, ես իմ ձեռով լցի խուրջինը, հըմա պառվի դեյրացու չըկար, ասավ՝ բդի էթամ Թիլֆիդ, ընդե կըճարվի: Էշտ գնաց Թիլֆիդ, մե ամիս ետո կըգա:

Էս մարթը էկավ տուն, կնզան պատմեց, կնիկն էլի ձեռով չանչեց, մըրոճիկ տվեց ու հերեսը թեքեց:

Մարթը մե ամիս սպասեց, հելավ գնաց Թիլֆիդ:

Թիլֆիդ գնաց, ծանոթ չուներ, պատահավ մե կինտոյի, կինտոյին պատմեց եղելութունը, կինտոն ասավ.—Իշի անզաճները հերկեն էր:

—Խա՛, խա՛,—ասավ էս մարթը:

—Էշը սկ՞ էր:

—Խա՛, խա՛, սկ էշ էր:

Խուրջինի մե թայը քցուկ էր Էշի աչ յանը, մեկը ձախ յանը:

—Խա՛, խա՛, իմ էշն ա հելե:

—Էշը Հերևանսա յանից էր գալում:

—Դուզ ա, դուզ ա, բալա՛ ջան:

—Բիճա՛, քո էշն էկավ ըստե, տարա Թամամշովի քարվանսարեն, իշքան կտոր տեսավ, չըխավնավ, ասավ՝ բդի էթամ Պետերբուրգ: Էշը գնաց Պետերբուրգ: Ես լսեր եմ, որ գացե Պետերբուրգ, դառցե գուրեռնատուր:

Էս մարթի բերանը մնում ա բաց: Խարցնում ա՝ բա ի՞նչ անեմ, մե խորո՛ւրթ տուր:

Կիհնտոն ասում ա. — Ել մի՛ սպասա, գնա՛ Պետերբուրգ: Խետտ էլ մե խոռոմ յոնջա կըտանես: Դոների մոտ պահակ ա զրե, կարող ա չըթողեն: Կասես գուրեռնատուրի մոտ շատ խիստ գործ ունեմ, իմ ծանոթն ա: Որ ներս կըմտնես, խոտը կըդնես ստովի վրեն ու կասես. «Ա՛յ աննամուս, դու իմ էշն հըլնես, գաս ըստե մնաս, էսքան պալատների ու փարքի տեր դառնաս, ընձի մոռանաս: Բա էտի մարթի արա՞ծ ա, բա դու ջետինը չե՞ս մտնում, ամո՞թ չեղի:

Էշը էլի վիզ չի առնի, որ հինքը էշ ա, քո լիզվով էլ չի խոսա, հուրիշ լիզվով կըխոսա, դու անգաճ չանես, կասես, որ՝ պետ տիսիչի<sup>19</sup> տոռ'ւր:

Էս մարթը պոեզ ա նստում, դուզ Պետերբուրգ: Էթում ա գուրեռեռնատուրի պալատը, գոռով ներս ա մտնում: Տենում են հնար չըկա, տանում են գուրեռնատուրի մոտը: Էս մարթը կիհնտոյի ասածները մեկ-մեկ կրկնում ա: Գուրեռնատուրը բան չի խասկնում:

Էս մարթն ասում ա. — Էն վախտ էլ դու էտենց հայվան իր, բան չիր խասկնում, ըտու խըմար էլ էշ իր: Հիմի էլ մեծ մարթ ես դարձե, էլի էն էշն ես մացե: Բա փողը տանելու վախտը խայերեն իր խոսում, հիմի մտետ գացեր ա՞: Իմ փողով դու մարթ դառնաս, հիմի խետս էլ չըխոսա՞ս:

Գուրեռնատուրի հրամանով թարգմանիչ բերին, թարգմանիչը լսաց, զարմացավ, հըմա վախեցավ դուզը թարգմանելուց, ասավ. — Էս մարթը քյասիթ մարթ ա, պարո՞ն գուրեռնատուր, էշը կորցրեր ա, ասում ա էրեխեքս մնացեր են անոթի, չեմ հիմանում՝ ով ա խելքին փչել, հինգ հազար մանեթ ա ուզում:

Գուրեռնատուրը տենում՝ ա գործը շատ կըբարթանա, կարքադրում ա էտ մարթին հինգ հազար մանեթ տան: Փողն առնում ա, ուրախ-ուրախ գալում ա տուն, պառվի անխելքության վրեն ծծողում ա: Բոլոր ծանոթներին, հարևաններին պատմում ա հիրա էշի պատմություն: Ասում են՝ էս մարթի էշը մինչեւ մահը մնաց գուրեռնատուր:

19 Հինգ հազար (Ծ.Բ.):